



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ**

« 10 » *Տպիսիս* 2018թ.

№ 2/1573-Կ

Հ Ր Ա Մ Ա Ն

**Ա.ՌՈՒԲԵՆՅԱՆԻՆ, Գ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԵՎ Գ.ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 14-րդ ենթակետով և հիմք ընդունելով հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2018 թվականի թիվ 15/2018 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները խախտելու, այն է, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2014թ. ապրիլի 27-ի թիվ 4-2/537289/-14 հանձնարարականով սահմանված ստուգման արդյունքներով տեղեկանքը ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչություն ներկայացման ժամկետը խախտելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության ստուգումների թիվ 12 բաժնի գլխավոր հարկային տեսուչներ Արայիկ Ռուբենյանին, Գևորգ Սարգսյանին և ավագ հարկային տեսուչ Գրիգոր Սահակյանին հայտարարել «ԲԱՆԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին.

3. Սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



(Handwritten signature)

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ